ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

02.03.2023 20:42

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ընդունել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերին:

Հանդիպման առիթը ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատան և ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ իրականացվող՝ անգլիական իրավունքին նվիրված երկօրյա դասընթացն էր:

Դասընթացը մեկնարկեց այսօր՝ 2023 թվականի մարտի 2-ին, իրականացվելու է առկա և հեռավար ձևաչափերով:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Կարևորելով անգլիական իրավունքի հիմունքների վերաբերյալ անհրաժեշտ հմտությունները և գիտելիքները՝ Սիմոն Բաբայանը շնորհակալություն հայտնեց դեսպան Ջոն Գալագերին և դասընթացավարներին՝ արդյունավետ գաղափարը կյանքի կոչելու համար:

Դասընթացի մեկնարկին ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերին: Նա ևս կարևորեց համատեղ համագործակցությունը և շնորհակալություն հայտնեց ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ ջերմ ընդունելության և համագործակցության համար:

Ելույթով հանդես եկավ նաև փաստաբան Դավիթ Հակոբյանը, ով 2015 թվականից հանդիսանում է նաև Անգլիայի և Ուելսի փաստաբան:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերին շրջեց նաև Փաստաբանների պալատի վարչական շենքում, այցելեց ՀՀ փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ:

Այնուհետև Հայաստանի փաստաբանների համար մեկնարկեց Անգլիական իրավունքին նվիրված դասընթացը:

Հիշեցնենք, որ այն կշարունակվի նաև վաղը առկա և հեռավար ձևաչափերով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })